ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 22.05.2015թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-17/15 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-17/15 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Ա/Ձ Նարեկ Մայիլյանի 2015 թվականի մայիսի 18-ին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա/Ձ Նարեկ Մայիլյանի կողմից 18.05.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված Սարավանի գյուղապետարանի և «ԱՍ գրուպ» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:
2. Կասեցնել «Սարավանի գյուղապետարանի և «ԱՍ գրուպ» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ԳԲԽ-17/15 բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Լեռնիկ Խաչատրյան**

Արթուր Բաղդասարյան